

**Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան հիմնադրամ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝ Խաղ-փորձարարությունների ազդեցությունը միջին
նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների
զարգացման գործընթացում**

**Կատարող՝ Արտաշատի Հովտաշեն մանկապարտեզի
դաստիարակ Անահիտ Մուրադյան**

Ղեկավար՝ մ.գ.թ. Ա.Մ.Ավագյան

Բովանդակություն

Ներածություն.....	3
1. Ճանաչողական հետաքրքրություն հասկացության բնութագիրը.....	5
2. Ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը միջին նախադպրոցական տարիքում.....	7
3. Խաղ-փորձարարությունների դերը ճանաչողական հետաքրքրությունների զարգացման ընթացքում	10
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.....	13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթության ոլորտի զարգացման գործում կարևորագույն խնդիրներից մեկը երեխաների մոտ հետաքրքրության զարգացումն է: Դա պայմանավորված է նրանով, որ հետաքրքրությունը էական դեր է խաղում երեխայի անհատականության ձևավորման գործընթացում: Հետաքրքրությունն իմացական ակտիվության յուրահատուկ ձև է, որն արտահայտվում է ամեն բան իմանալու, որևէ գործունեության մեջ ներգրավվելու, ամեն նորը ճանաչելու ցանկությամբ: Ուսումնասիրությունները փաստում են, որ մարդկային հետաքրքրությունները հանդես են գալիս հոգեկան գործընթացների համադրման արդյունքում, որով ապահովվում է մարդու իմացական գործունեության առաջանցիկ զարգացումները, անձի հուզական վիճակները:

Ճանաչողական հետաքրքրությունների զարգացման հիմնախնդրի ուսումնասիրության տեսական հիմքերը ձևակերպված են գենետիկական և հոգեբանության դպրոցի ներկայացուցիչների կողմից: Այդ դպրոցը գլխավորում էին Ժան Պիաժեն, Հանրի Վալլոնը, Լեոնա թդ Կոլբերգը, Ջերոմ Բրուները: Երեխայի իմացական հետաքրքրությունների զարգացումը Ժ-Պիաժեն դիտարկում է մտածողության տեսության մեջ:

Ճանաչողական հետաքրքրությունները մշտապես խորացող, երևույթների բազմազանության իմաստի ու էության տարաբնույթ կողմերը ճանաչելու իրական հնարավորություններ են, որով մինչև կյանքի վերջը ճանաչում, հասկանում ու խորացնում ենք թե՛ առարկայական աշխարհի մասին պատկերացումները, թե՛ սոցիալական միջավայրի առանձնահատկությունները, օրենքներն ու հակասությունները: Հասկանալի է, որ ճանաչողական հետաքրքրությունը պետք է հանդես գա իմացական գործունեության մեջ:

Նախադպրոցական տարիքում ճանաչողական հետաքրքրության զարգացմանն ուղղված միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում մանկան փորձարարությունը:

Աշխատանքի նպատակն է՝ բացահայտել խաղ-փորձարարությունների նշանակությունը միջին նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների զարգացման գործընթացում:

Աշխատանքի ընթացքում նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

1. Նշել ճանաչողական հետաքրքրություն հասկացության էությունը:
2. Վերլուծել խաղ-փորձարարությունների հասկացությունը և դրանց դերը ճանաչողական հետաքրքրությունների զարգացման ընթացքում:

Աշխատանքի ընթացքում օգտվել ենք հետևյալ **մեթոդներից.**

- Դիտում
- Զրույց
- Հարցում

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 տեսական, հետազոտական մասերից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

1. Ճանաչողական հետաքրքրություն հասկացության բնութագիրը

Ճանաչողական հետաքրքրությունների հիմնախնդիրը ուսումնասիրվել է Բ.Գ. Անանևի, Լ.Ի.Բոժովիչի, Դ.Բ.Գոդովիկովայի, Ս.Լ.Ռուբինշտեյնի, Վ.Ն.Մյասիշևի, Ն.Ռ.Մորոզովայի և այլոց կողմից:

Գործունեության մշտական հզոր շարժառիթներից մեկը հետաքրքրությունն է:

Հայտնի է, որ հետաքրքրությունը, որպես մարդկային բարդ և կարևոր գոյացություն, մոտիվացիայի կոնկրետ դրսևորում, ունի բազմաթիվ մեկնաբանություններ՝ կապված.

- ✓ մարդու ուշադրության ընտրովի կետրոնացման
- ✓ նրա մտավոր և հուզական ակտիվության դրսևորման
- ✓ առարկայի նկատմամբ անհի յուրահատուկ վերաբերմունքի [1, էջ 5]:

Ըստ Գ.Ի.Շչուկինայի՝ հետաքրքրությունը որպես շրջապատող աշխարհի առարկաների և երևույթների հանդեպ մարդու հոգեկան գործընթացների ընտրողական կենտրոնացում, անձի ցանկություն, պահանջմունք, միտում, գործունեություն հանգեցնում է հոգեկան բավարարվածության և հանդես է գալիս որպես անձի ակտիվության շարժիչ ուժ:

Ն.Ռ.Մորոզովայի կարծիքով հետաքրքրությունն արտահայտվում է որպես գործունեության նկատմամբ դրական հույզերով և ճանաչողությամբ (այլ խոսքերով՝ այն, ինչը սովորաբար անվանվում է իմացության և ճանաչման ուրախություն) [2, էջ 36]: Հետաքրքրությունների և գործունեության կապը դիտարկվում է Մ.Ն.Սկատկինի կողմից, ով ենթադրում է, որ հետաքրքրությունները դրսևորվում են գործունեության մեջ և իրենց հետագա զարգացումն են ստանում, քանի որ հետաքրքրությունների վրա ազդում են ոչ միայն գործունեության առանձին բաղադրիչները, այլ անձի սուբյեկտիվ կողմը:

Հայտնի հոգեբան Ա.Լեոնտևը խոսեց ինտելեկտի զարգացման վրա հետաքրքրության մեծ ազդեցության մասին՝ հաստատելով իր միտքը Լ.Ֆեյերբախի խոսքերով. «Այն, ինչի համար սիրտը բաց է, մտքի համար նույնպես չի կարող գաղտնիք լինել [7]:

Հետաքրքրություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն, մասնագիտական հետաքրքրություն. տարբեր ձևով են արտահայտում մարդու ընտրովի վերաբերմունքը օբյեկտիվ աշխարհին, գործունեությանը և կայունության աստիճանին: Ճանաչողական հետաքրքրության բարդ հոգեբանական բնույթը որոշում է անձի զարգացման վրա դրա ազդեցության ուժը:

Ճանաչողական հետաքրքրությունը, առաջին հերթին, կարելի է բնութագրել որպես անձի բարդ վերաբերմունք շրջապատող իրականության առարկաների և երևույթների նկատմամբ, որում արտահայտում է նրա ցանկությունը այդ երևույթների համապարփակ, խորը ուսումնասիրությամբ և դրանց էական հատկությունների իմացությամբ: Ճանաչողական հետաքրքրությունը, ինչպես ընդհանրապես հետաքրքրությունը, չի ներկայացնում առանձին կոնկրետ մտավոր գործընթաց, ինչպիսին է, օրինակ, մտածողությունը, ընկալումը, հիշողությունը: Օբյեկտիվ աշխարհի հետ մարդու այս բարդ հարաբերություններում մտավոր, հուզական և կամային գործընթացները փոխազդում են օրգանական միասնության մեջ: Սա էլ հենց հիմք է հանդիսանում ճանաչողական հետաքրքրության ազդեցությանը հոգեկան գործընթացների զարգացման վրա (հիշողություն, երևակայություն, ուշադրություն):

Գ.Ի. Շչուկինան կարծում է, որ ճանաչողական հետաքրքրությունը, առաջին հերթին, կարելի է բնութագրել որպես անձի բարդ վերաբերմունք շրջապատող իրականության առարկաների և երևույթների նկատմամբ, որն արտահայտում է նրա ցանկությունը համապարփակ, խորը ուսումնասիրության, դրանց էական հատկությունների իմացության: Մեկ այլ ձևակերպմամբ հետաքրքրությունն արտահայտվում է որպես գործունեության նկատմամբ դրական հույզերով և ճանաչողությամբ (այլ խոսքերով՝ այն, ինչը սովորաբար անվանվում է իմացության և ճանաչման ուրախություն): [1, էջ 5]

Առարկայական աշխարհին վերաբերող գիտելիքները և պատկերացումները կարիք ունեն մշտական խորացման, քանի որ մի բան է, երբ երեխան առաջին անգամ է ծանոթանում տվյալ երևույթին, բոլորովին այլ արդյունք կարող ենք սպասել, երբ երեխան մի քանի անգամ առնչվել է տվյալ երևույթի հետ և դրա

վերաբերյալ բազմաթիվ հարցեր առաջադրել մեծահասակին, փորձելով պարզագույն պատկերացում կազմել պատճառի և հետևանքի մասին:

Կարող ենք փաստել, որ հետաքրքրության գործառույթները անչափ շատ են բնության հետ շփման ուղղակի և միջնորդավորված ուսումնասիրման պարագայում: Ճանաչողական ուղղվածությունը հիմք է տալիս պարբերաբար խորանալու հուզական, կամային և մտավոր ոլորտի հատկությունների գիտակցման մեջ:

Հասկանալի է, որ ճանաչողական հետաքրքրությունը ընտրովի վերաբերմունք է միկրոմիջավայրի հանդեպ և կարող է փոփոխվել կախված երեխայի ներքին վիճակից (ուրախություն, տխրություն, հուզական վիճակ, ցանկություն և այլն), բայց հետաքրքրությունը կայուն դրդապատճառ է իմացական գործունեության համար և էապես կարող է ճանապարհ հարթել դեպի կողմնորոշումների և ուղղվածության ոլորտը [1, էջ 15]:

Հետաքրքրությունները պայմանավորված են նախադարոցականի ճանաչողական ակտիվության դրսևորումներով և դրանց հետագա զարգացումները կապվում են երեխաների որոնողական գործունեության ընթացքում նոր տպավորությունների ստացման հետ:

1.2 Ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը միջին նախադարոցական տարիքում

Հետաքրքրասիրությունը իր սկզբնական փուլում հանդես է գալիս որպես ճանաչողական վերաբերմունք, գործունեության կազմակերպման պայման, ինչպես նաև հակասական փաստեր բացահայտելու իրողություն, որոնք ցույց են տալիս հետաքրքրասիրության բազմաֆունկցիոնալ արտահայտվածությունը երեխայի իմացական գործունեության պայմաններում: Հետաքրքրությունները պայմանավորված են նախադարոցականի ճանաչողական ակտիվության դրսևորումներով և դրանց հետագա զարգացումները կապվում են երեխաների որոնողական գործունեության ընթացքում նոր տպավորությունների ստացման հետ [1, էջ 13]:

Հետաքրքրությունները և իմացական գործունեությունը փոխադարձ կապված են միմյանց հետ, այսինքն հետաքրքրությունները ազդում են գործունեության արդյունավետության վրա, իսկ գործունեության ընդլայնումը կարող է խորացնել երեխայի հետաքրքրությունները, ոչ միայն կոնկրետ առարկայի, այլև միկրոմիջավայրի հանդեպ: Այս գործընթացների արդյունքում, աստիճանաբար խորանում են երեխայի գիտելիքները, կարգավորվում են նրա մտավոր գործողությունները, երեխան ավելի շատ է ինքնուրույն գործում և աստիճանաբար քիչ է զգում մանկավարժական աջակցության դերը: Սակայն, երեխաների հետաքրքրությունները միշտ չէ, որ կայուն են, այդ է պատճառը, որ դաստիարակներից պահանջվում է մշտական ուշադրություն երեխաների հետաքրքրությունների ձևավորման և զարգացման համար: Երեխայի հետաքրքրությունները միշտ առկա են, սակայն ուսումնադաստիարակչական գործընթացը պետք է ուղղված լինի երեխաների հետաքրքրությունների նպատակամետ զարգացմանը Հետաքրքրությունները իրենց բովանդակությամբ և ուղղվածությամբ կապված են երեխաների անհատական և տարիքային առանձնահատկությունների հետ, չմոռանալով առանձին դեպքերում նաև խմբային աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը [7]:

Բազմաթիվ հեղինակներ անդրադարձել են ճանաչողական գործունեության դերի պարզաբանմանը, նկատի ունենալով, որ ճանաչողական գործունեության մեջ ակտիվանում են գիտակցության բոլոր կառուցվածքները, որոնք հանգեցնում են գիտելիքի ձեռքբերմանը և երեխայի մտքի ակտիվ աշխատանքի խթանմանը: Ճանաչողական պահանջմունքների բավարարումը իրականանում է կոնկրետ այնպիսի խնդիրներ լուծելիս, որոնք հետաքրքրիր են երեխայի համար կամ կրում են մրցակցային բնույթ: Խաղն իհարկե գործունեության առաջատար ձև է, բայց պետք է նախապես որոշել, թե ինչպիսի խաղեր ենք կիրառում, ինչպես ենք դրանք կազմակերպում և ինչպես ենք երեխայի ներառում խաղային գործունեության մեջ, որպեսզի նրա մեջ կամա թե ակամա ձևավորվի հետաքրքրություն և գիտելիքի ձեռքբերման անհրաժեշտություն:

Ճանաչողական հետաքրքրության զարգացման համար անհրաժեշտ է համակարգային վերլուծության ենթարկել մի շարք հասկացություններ, գաղափարներ ու պատկերացումներ: Այնպիսիք, ինչպիսին են ուշադրության կենտրոնացումը, գործունեության հանդեպ հետաքրքրությունը, հուզականային և մտավոր գործընթացների ամբողջականությունը, հասակակիցների հանդեպ վերաբերմունքը, նրանց հետ միջանձնային հարաբերությունների հաստատումը, առարկայի կամ երևույթի նշանակությունը և նրա հուզական գրավչությունը: Թվարկածները սերտորեն կապված են միմյանց հետ և կարող են իրականացվել երեխայի մտածության, հիշողության, ուշադրության, խոսքի, հուզազգացմունքային ոլորտի կապի բացահայտման միջոցով [2, էջ 38]:

Ճանաչողական հետաքրքրության առանցքը մտածական գործընթացներն են կամ մտավոր գործողությունները, որոնք ուղղված են գործնական խնդիրների լուծմանը: Հետաքրքրության համար անհրաժեշտ են երկու կարևոր իրողությունների համադրում՝ ուշադրություն և կամային ջանքերի գործադրում: Ուշադրության կենտրոնացման պարագայում առաջ է գալիս զարմանքը, հաջողության հասնելու ուրախությունը, հպարտությունը, գոհունակությունը, վստահությունը, որոնք հետագայում երեխային մղում են նոր որոնումների: Ժամանակի ընթացքում՝ շարունակական որոնումների պարագայում ընդլայնվում են երեխաների հայացքները, նախնական պատկերացումները և գիտելիքները, որոնք կանխորոշում են նրա հետագա գործունեությունը [1, էջ 25]:

Միջին նախադպրոցական տարիքում երեխան ավելի շատ է կենտրոնանում առարկաների և երևույթների վրա, կատարում է ինքնուրույն գործողություններ և կրկնում կամ պատմում է մուլտֆիլմերի բովանդակությունը, կամ կատարում է հերոսների գործողությունները: Հետագայում ընդլայնվում են երեխայի հետաքրքրությունները և ավագ նախադպրոցական տարիքում երեխան ավելի շատ է հորինում պատկերներ, կատարում կառուցողական գործողություններ, փոխում խաղալիքների ձևը, որոնցում պարզ երևում է, որ նա գործում է համեմատաբար ինքնուրույն և ազատ, կարողանում է պատասխանել իրեն տրվող հարցերին, որից երևում է, որ նա ավելի շատ ուշադրություն է դարձնում պատճառահետևանքային կապերի բացահայտմանը: Ահա թե ինչու ենք ճանաչողական հետաքրքրությունների

ձևավորման գործընթացում կարևորում որոնողական գործունեության կազմակերպումը ու իրականացումը մանկապարտեզում:

Նախադպրոցական տարիքում ճանաչողական հետաքրքրությունները դրսևորվում են որոշակի անցումներով, որոնք կարելի է ձևակերպել որպես ինքնատիպ հաջորդականությունների շղթա, անցում.

- ✓ առարկայական աշխարհից դեպի գիտելիքներ,
- ✓ արտաքին հատկանիշներից դեպի խորքային կամ թաքնված հատկությունների բացահայտում,
- ✓ իմացական ակտիվությունից անցում դեպի ստեղծագործական բնույթի բացահայտումներ [1, էջ 28]:

Այսպիսով կարող ենք ասել, որ ճանաչողական հետաքրքրությունները դրսևորվում են երեխայի հոգեկան գործընթացների՝ մտածողության, հիշողության, ուշադրության, խոսքի, հուզական ոլորտի հետ կապված և ուղղված են նախադպրոցականի ճանաչողական պահանջմունքների բավարարմանը և նպաստում են իմացական գործունեության դրդապատճառների ձևավորմանը: Եվ քանի որ նախադպրոցական տարիքում երեխայի գործունեության դրդապատճառները կայուն չեն, հետևաբար, մշտապես անհրաժեշտ է ստեղծել պայմաններ՝ կայուն դրդապատճառներ ձևավորելու համար:

1.3 Խաղ-փորձարարությունների դերը ճանաչողական հետաքրքրությունների զարգացման գործընթացում

Ներկայումս մանկան փորձարարություններն ակտիվ կիրառվում են որպես նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր գործունեության բարձրացման, ճանաչողական հետաքրքրությունների զարգացման միջոց: Փորձարկումը գործում է որպես ուսուցման մեթոդ, եթե այն օգտագործվում է երեխաներին նոր գիտելիքներ փոխանցելու համար:

Երեխաների փորձարարության գիտամանկավարժական հիմքերը որպես ինքնուրույն գործունեության հատուկ ձև տեղ են գտել են Ռուբինշտեյնի, Լ.

Վենգերի, Պ. Սամոռուկովայի, Պոդոլյակովայի և ուրիշների աշխատություններում: Մանկան փորձարարությունների մեթոդը ներդրվել է Պոդոլյակովի կողմից, նա այն ճանաչողական գործունեության զարգացմանը նպաստող առաջատար մեթոդ է համարել:

Մանկապարտեզում փորձարարական գործունեությունը համարվել է տարրական փորձերը հատուկ կազմակերպված պայմաններում դիտարկումներ: Փորձը կյանքի փոխակերպումն է առարկայի կամ երևույթի՝ թաքնված օբյեկտների հատկությունները բացահայտելու, նրանց միջև կապերի հաստատման, դրանց փոփոխության պատճառների բացահայտման նպատակով:

Ն. Ն. Պոդոլյակովան նշում է, որ մանկան փորձարարությունները թույլ են տալիս ավելի լիարժեք տեղեկություն ստանալ ուսումնասիրվող երևույթի կամ օբյեկտի վերաբերյալ, տեսնել այն ինչը դաստիարակի բանավոր բացատրության ժամանակ հնարավոր չէ պատկերացնել [6, էջ 95]:

Ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի խմբային աշխատանքը, միմյանց փորձի յուրացումը, անձնական փորձի կուտակումը: Մանկան փորձարարություններում հիմնականն ուսումնասիրվող օբյեկտի և այլ առարկաների և շրջակա միջավայրի հետ նրա փոխհարաբերությունների վերաբերյալ իրական, բազմակողմանի գիտելիքներ ստանալն է, որը նպաստում է հիշողության զարգացմանը ակտիվացնում է մտածական գործընթացները ուղղված վերլուծելու, համեմատելու և ընդհանրացումներ կատարելու կարողությունների զարգացմանը:

Հետաքրքրությունների ձևավորման հուսալի ուղիներից է փորձարարական աշխատանքների կազմակերպումը, որի արդյունքում երեխան համոզվում է այս կամ այն երևույթի բացահայտման մեջ, ձեռք է բերում համապատասխան գիտելիք և որոշակի հետաքրքրություններ:

Փորձարարական աշխատանքը կարելի է կազմակերպել երեխաների և մեծահասակների համատեղ գործունեության ընթացքում: Այդ դեպքում ավելի հաճախ խոսում են համագործակցության մասին և դրանից զատ կարելի է կազմակերպել նաև երեխաների անհատական գործունեություն, տալ այնպիսի

հանձնարարություններ, որ երեխան փորձի սեփական ուժերով կատարել փորձարարական աշխատանքներ: Հետաքրքրությունը որպես երեխայի ակտիվության դրսևորման ձև ենթադրում է մի շարք գործընթացների կազմակերպում, որոնք ունեն որոշակի տրամաբանություն և դրսևորման յուրահատկություններ: [1, էջ 22-23]

Բազմաթիվ տեսական գաղափարներ են առաջարկվել ճանաչողական հետաքրքրությունների վերաբերյալ: Սկզբում խնդիրը ավելի շատ ուսումնասիրվել է տեսականորեն, իսկ գործնական կողմով զբաղվել են մանկավարժները, ովքեր մշակել են ուսուցման սկզբունքներ, գործընթացներ և այլն: Ճանաչողական հետաքրքրությունը ըստ Ն.Ն Պոդոյակովի ներառում է ինչ-որ բան իմանալու ձգտում, իհարկե, այն ինչ ձեռք է բերվում խոսում է հիշողության մասին, որը թույլ է տալիս՝ հիմնվելով անցյալի վրա որոնողական գործունեություն կազմակերպել նոր գիտելիքներ ձեռք բերելու համար:

Նախադպրոցականի փորձարարությունն ունի իր առանձնահատկությունները, որոնցից գլխավորն այն է, որ այն նման է խաղի: Մանկան փորձարարությունները պարտադրաբար չեն: Չի կարելի երեխային ստիպել փորձ անել: Ինչպես խաղի ժամանակ այնպես էլ փորձարարության, պետք չէ խստորեն վերահսկվի փորձի տևողությունը: Միևնույն ժամանակ, եթե փորձի ընթացքում երեխան չի ցուցաբերում հետաքրքրություն, ապա այն կարելի է ավարտել պլանավորված ժամանակից շուտ: Մանկան փորձարարության ընթացքում պետք չէ խիստ հետևել նախապես պլանավորված ծրագրին: Կարելի է թույլ տալ երեխաներին փոփոխել փորձի կանոնները ինչպես իրենք են ցանկանում, եթե այդ փոփոխությունները աշխատանքի նպատակից շատ չեն հեռվացնում և չեն վնասում կենդանի օրգանիզմները: Երեխաները չեն կարող առանց խոսելու աշխատել: Բացի այդ իր բացահայտումներով կիսվելու պահանջմունքը, հանդիսանում է յուրաքանչյուր ստեղծագործ մարդու բնական պահանջմունքը անկախ նրա տարիքից [3, էջ 217]:

Երեխաների փորձարկումների ցանկությունը բացատրվում է նրանով, որ նրանց բնորոշ է տեսողական-արդյունավետ և տեսողական-փոխաբերական մտածողությունը, և փորձերը, ինչպես ոչ մի այլ մեթոդ, չեն համապատասխանում

տարիքային այս հատկանիշներին: Նախադպրոցական տարիքում այն առաջատարն է, իսկ առաջին երեք տարիներին՝ գործնականում աշխարհը ճանաչելու միակ միջոցը:

Հաջորդ կարևոր պայմանը, որը պետք է ի նկատի ունենանք, դա երեխայի սխալվելու իրավունքն է. անհնարին է պահանջել, որ երեխան միայն ճիշտ գործողություններ կատարի [5]:

Այսպիսով, նախադպրոցականների համար խաղ-փորձարարությունները հանդիսանում են առաջատար գործունեության ձև և հետաքրքրության զարգացման խթանիչ: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, նախադպրոցական տարիքում ձեռք բերված որոնողական և փորձարարական գործունեության փորձն օգնում է ապագայում զարգացնել ստեղծագործական ունակությունները:

Հետազոտական աշխատանք

Մանկապարտեզում փորձարարություններ կազմակերպելիս անհրաժեշտ է այնպիսի պայմաններ ստեղծել, որոնք կնպաստեն երեխաների հաղորդակցմանը և ազատ աշխատանքին: Փորձարարություն անցկացնելիս պետք է հաշվի առնել երեխաների առանձնահատկությունները: Օրինակ կան երեխաներ, որոնք փորձարարության հակում ունեն, իսկ կան երեխաներ, որոնք չունեն: Ուրեմն անհրաժեշտ է փորձարարություններով հետաքրքրված երեխաներին ավելի հաճախ թույլ տալ փորձեր անել, քանի որ կարող է վատ ազդեցություն ունենալ այն, եթե որոնողական հմտություններ ունեցող երեխաներին հնարավորություն չտանք անընդհատ նոր երևույթների հանդիպել: Այն երեխաները, որոնք հետաքրքրված չեն փորձերով, կարելի է ներգրավել բույսերի օրագրերի հետ աշխատանքին: Պետք չէ շատ տարվել փորձի արդյունքների ամրագրմամբ: Փորձի ընթացքում արդյունքների գրանցումը և ամրագրումը կարող են ավելորդ ծանրաբեռնվածություն լինել երեխաների համար:

Այսօր նախադարձական կրթության արդի խնդիրներից է մանկապարտեզում ստեղծել այնպիսի մանկավարժական պայմաններ, որոնք կնպաստեն յուրաքանչյուր երեխայի ճանաչողական ներուժի լիարժեք բացահայտմանը և հետազոտական գործունեության զարգացմանը: Փորձարարական գործունեությունը, խաղ փորձարարությունները լայն հնարավորություն են ստեղծում նշված խնդրի արդյունավետ լուծման համար, քանի որ դրանք մեծ հետաքրքրություն են առաջացնում երեխաների մոտ: Մանկան փորձերը երեխաներին տալիս են իրական պատկերացումներ ուսումնասիրվող առարկայի տարբեր կողմերի, շրջակա միջավայրի այլ օբյեկտների հետ դրա փոխհարաբերությունների մասին:

Հետազոտական աշխատանքի ընթացքում կազմակերպել ենք մի շարք խաղ-փորձարարություններ, որոնք ընտրել ենք հաշվի առնելով նաև մեր դիտարկումների արդյունքում գրանցած ճանաչողական հետաքրքրության որակական ցուցանիշների ցածր մակարդակը:

1. Խաղ-փորձարարություն «Օդի որոնում»:

Երեխաների հետ ընտրել ենք ցանկացած առարկա, ինքնուրույն ցուցադրել ենք փորձը, բացատրել ենք իրենց գործողությունների արդյունքի հիման վրա ընթացող գործընթացները (օրինակ՝ փչել խողովակի մեջ, որի ծայրն իջեցվել է ջրի մեջ, որի օգնությամբ մեկ օբյեկտից գնդիկը պիտի տեխափոխենք մեկ այլ օբյեկտ, փչել փուչիկ և այլն):

2. Խաղ փորձարարություն .Ի՞նչ է անհրաժեշտ բույսը կերակրելու համար:

Մեծահասակը երեխաներին առաջարկում է հանելուկ նամակ. Ի՞նչ կլինի, եթե լույսը չընկնի թերթիկի մի մասի վրա (թերթի մի մասը ավելի թեթև կլինի): Երեխաների ենթադրությունները փորձարկվում են փորձով. տերևի մի մասը փակվում է կպչուն ժապավենով և բույսը մեկ շաբաթով դրվում է լույսի աղբյուրի տակ: Մեկ շաբաթ անց ժապավենը հանվում է:

3. Խաղ-փորձարարություն «Գույներ»:

Ընթացքը. Բամբակյա սրբիչի կամ անձեռոցիկի վրա նկարել ենք ինչ-որ նկարի ուրվագիծը: Մյուս կողմից անձեռոցիկի վրա նախշի ուրվագիծը երևում է մի փոքր կիսաթափանցիկ: Վերցրել ենք ևս մեկ անձեռոցիկ, դրել ենք առաջին անձեռոցիկի

հակառակ կողմի վերևում, եզրագծի երկայնքով ներկել ենք գունավոր ֆլումաստերներով: Այսպիսով, մեկ անձեռոցիկի վրա կլինի տվյալ նկարի մեկ այլ գույնի ուրվագիծ: Այնուհետև ծալել ենք թուղթը այնպես, որ ուրվագիծը վերևում լինի, իսկ գույնը ներքևում: Եվ թուղթը դրել ենք ջրի մեջ: Որից հետո գույնը անցնում է, և նկարը ներկվում է ջրի վրա: Երեխան հետաքրքրությամբ է դիտում, թե ինչպես է նկարը ներկվում ջրի օգնությամբ:

Այս փորձի օգնությամբ երեխաների մոտ ձևավորվում է ճանաչողական հետաքրքրություն գույների, ձևերի, կենդանիների և եղանակի մասին: Եվ կարևոր է նշել այն, որ նման փորձի համար օգտագործվում են կենցաղային իմպրովիզացված առարկաներ:

Կազմակերպված բոլոր խաղ-փորձարարությունները մեծ հետազքրքրություն առաջացրեցին երեխաների մոտ, նրանք ակտիվ մասնակցում էին փորձերին և չափազանց ուշադիր ու հետաքրքրված էին թե ինչպիսի արդյունք կստացվի փորձի վերջում:

Այսպիսով, հետազոտական աշխատանքի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ խաղ-փորձարարությունները նախադարձականների ճանաչողական հետաքրքրությունների զարգացման արդյունավետ միջոց են հանդիսանում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, կատարած ուսումնասիրությունների արդյունքում կարող ենք եզրակացնել, որ հետաքրքրասիրությունը ճանաչողական հետաքրքրության զարգացման փուլ է և այն մշտապես ուղեկցվում է դրական հույզերով, բացի դրանից հետաքրքրասիրությունը՝ հատկապես նախադպրոցական տարիքում, նպաստում է ճանաչողական գործունեության արդյունավետության բարձրացմանը: Ճանաչողության հետաքրքրությունները բացառիկ դեր են կատարում երեխայի կյանքում, դրանք դրսևորվում են երեխայի հոգեկան գործընթացների՝ մտածողության, հիշողության, ուշադրության, խոսքի, հուզական ոլորտի հետ կապված և ուղղված են նախադպրոցականի ճանաչողական պահանջմունքների բավարարմանը և նպաստում են իմացական գործունեության դրդապատճառների ձևավորմանը:

Միջին նախադպրոցական տարիքում ճանաչողական հետաքրքրությունները ձևավորվում են ըստ փուլերի. խոսքի ձևավորումը որպես ճանաչողության հիմք; մեծահասակների հետ շփումներ, ճանաչողական բնույթի հարցերի աջառադրում, ճանաչողական պարզագույն խնդիրներ; ձեռք բերած գիտելիքների հանդեպ դրական վերաբերմունք:

Խաղ փորձարարությունները նպաստում են նախադպրոցականի տրամաբանական մտածողության, դիտողականության, հետաքրքրասիրության, ճանաչողական հետաքրքրության և խոսքի զարգացմանը: Փորձարարությունների ընթացքում արտահայտվում է երեխաների գիտակցված գործունեությունը, ուղղված բնության ավելի լավ իմացությանը, առարկաների և երևույթների միջև կապերի բացահայտմանը և բնության վրա մարդու գործունեության ազդեցության բացահայտմանը: Փորձարարությունների ընթացքում երեխան գիտելիքները պատրաստի չի ստանում, այլ ձեռք է բերում գործունեության ընթացքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սիմոնյան Ա. Ավագ նախադպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման հնարավորություններն առարկայական զարգացնող միջավայրի պայմաններում. Ուսումնամեթոդական ձեռնարկ. ԵՐԵՎԱՆ–2020, 88 էջ:
2. Баранова Э.А. Диагностика познавательного интереса у младших школьников и дошкольников СПб.: Речь, 2005. - 128 с. [84-85, 87-88]:
3. Гончарова Е.В. Теория и методика экологического образования детей дошкольного возраста: Издательство Нижегородского государственного гуманитарного университета. 2008-326 с.
4. Дыбина, О.В., Поддъяков Н.Н. «Ребенок в мире поиска: поисковой деятельности детей дошкольного возраста» / Под ред. О.В. Дыбиной. – М.: ТЦ Сфера, 2005.
5. Иванова А.И. Экологические наблюдения и эксперименты в детском саду. М., 2004.
6. Поддъяков А.Н. Исследовательское поведение: стратегии познания, помощь, противодействие, конфликт. – М.: Академия, 2000. – 266 с.
7. http://volkovajulia.blogspot.com/p/blog-page_904.html?m=1